ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2217 գ. Գեղաշեն, 1 ին փողոց 30 Վարչական շենք, Հեռ. (060) 286013 , էլ.փոստ gechashen67@mail.ru

05.02.2018թ. N01/23-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի Պետրոսյան

Ձեր հրապարակմանն ենք ուղարկում Գեղաշեն համայնքի ղեկավարի որոշումները և աշխատակազմի քարտուղարի հրամանը:

Առդիր 4 էջ

Համայնքի ղեկավար՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Հովհաննիսյան
Հեռ. 077427455

ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԵԼՄՏ No 23
«05» 02 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 1

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով՝ որոշում եմ.

1.2018 թվականի հունվարի 18-ին ժամը 16:00-ին գումարել Գեղաշեն համայնքի ավագանու արտահերթ նիստ:
2.Արտահերթ նիստն անցկացնել Գեղաշենի համայնքապետարանի վարչական շենքում:
3.Հաստատել արտահերթ նիստի օրակարգը՝
1)Համայնքի ղեկավարի հաղորդումը 2017 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին:
2)Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 08-ի N 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3)Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 08 N30-Ա և 31-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018թ. հունվարի 15
գ.Գեղաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 2

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի «Խնամակալության և հոգեբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի հունիսի 22-ի N 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 164-Ն որոշման 9-րդ կետը՝ որոշում եմ.

1.Հաստատել Գեղաշեն համայնքի խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի 2018թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը, համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20/8թ. հունվարի 19
գ.Գեղաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 3

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N3-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշում եմ.

1.Գեղաշեն համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 08-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N3-Ն որոշման հրապարակումն իրականացնել Գեղաշեն համայնքի տարածքում փակցնելու միջոցով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20 18թ. հունվարի 19
գ.Գեղաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

ՀՐԱՄԱՆ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 2

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՄԱԳԹԱՂ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ, ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՕՐԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և 8-րդ կետի բ) ենթակետով հրամայում եմ

1.Գեղաշեն համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մագթաղ Ծառուկյանի, առաջին կարգի մասնագետ Նաիրա Խաչատրյանի հերթական ատեստավորման օր նշանակել 2018թվականի մարտի 7-ին:

2.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդման օրվանից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018թ. հունվարի 29

գ.Գեղաշեն